Հ Ր Ա Մ Ա Ն N 156-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«01» **ԱՊՐԻԼԻ** 2015 **Թ.** **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ԱՐԵՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը հաստատելու մասին» N 436-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2015 թվականի մարտի 27-ի N 01/13/2/1075-15 գրությունը և Արևիկ Հարությունյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության միջազգային պայմանագրերի և ապոստիլի բաժնի պետի (ծածկագիր՝ 14-2.2-98) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Արևիկ Անդրանիկի Հարությունյանի հետ 2015 թվականի ապրիլի 1-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

Պաշտոնակատար՝ **ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**